1845

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«14» 04 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 096-25

Նախաձեռնող՝ ***«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ***
ք.Երևան, Դավիթաշեն 4 թղմ., 32/45

Գործունեությունը՝ ***Տեղ համայնքի Խնածախ բնակավայրում կրթահամալիրի կառուցում***
Սյունիք

Առդիր՝ ***5 թերթ***

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 09 6 - 25

«14» ապրիլի **2025թ.**

Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խնածախ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Տեղ համայնք,Խնածախ բնակավայր, 10-րդ փողոց, 1 հողամաս

Ներածական մաս. «Կապիտալ Դիզայն» ՍՊ ընկերությունը նախատեսում է Տեղ համայնքի Խնածախ բնակավայրի 10-րդ փողոց 1 հողամաս հասցեում իրականացնել կրթահամալիրի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում :

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ № 04042025-09-0023 /ծածկագիրը՝ 09-044-0112-0679/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սյունիքի մարզի Տեղ համայնքի Խնածախ բնակավայրում՝ «Մինչև 2026 թ.-ը կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

- Հողամասի մակերեսը - 14442.17 քմ
- Շենքի կառուցապատման մակերեսը - 2102.5 քմ
- Շենքի ընդհանուր մակերեսը - 3445.3 քմ
- Շենքի օգտակար մակերեսը - 3059.3 քմ

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Կնաչապատման մակերես - 6853.7 քմ

Նոր կառուցվող դպրոցի շենքից բացի տարածքում տեղակայվելու են նաև սպորտային հրապարակ, արևային վահանակների տեղադրման տարածք, լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան, ջերմոց, մաքրման կայան, մաքրված ջրի ռեզերվուար, զրուցարան, տնտեսական բակ, խաղահրապարակ:

Տեղակապվող կրթահամալիրի ծավալատարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք՝ իրար կցված ծավալներից բաղկացած շինություն: Այն կազմված է երկհարկանի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և մեկ հարկանի մանկապարտեզից: Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ:

Առաջին հարկի ռեկրեացիոն գոտու երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ: Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիոն գոտու շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Դպրոցի բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով, առկա է նաև հարկերը կապող վերելակ: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար:

Նախագծով նախատեսված է ճակատների երեսապատումը իրականացնել ավտոկլավիր ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ գործարանային պայմաններում ներկված գունավոր սալերի միջոցով:Կառույցի շուրջը նախատեսում է սալվածք՝ բազալտե ջարդոնից: Մանկապարտեզի սաների համար բակում նախատեսվում է կազմակերպել մանկական խաղահրապարակ իր շվաքարաններով, որտեղ նախատեսվում է տեղադրել երկու զրուցատաղավար՝ 6,8x5.5 մ չափերով: Խաղահրապարակը նախատեսվում է կահավորել մանկական խաղերով: Խաղահրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 500.0 քմ: Խաղահրապարակները միմյանցից բաժանված կլինեն սիզամարգերով: Նախատեսվում է նաև տեղադրել նոր նստարաններ և աղբամաններ: Դպրոցի սաների համար նախատեսվում է կառուցել բաց սպորտհրապարակ իր տրիբունայով, ընդհանուր 540.0 քմ մակերեսով: Կրթահամալիրի տարածքում նախատեսվում է տեղակայել նաև ուսումնական ջերմոց (32.0 քմ):

Կրթահամալիրի հողամասի պարագծով նախատեսվում է իրականացնել ցանկապատում՝ մետաղական 1.3մ բարձրությամբ ցանկապատերով: Գլխավոր հատակագծում նշված հատվածներում, ելնելով ռելիեֆի անհարթություններից նախատեսվում է կառուցել ե/բ հենապատեր: Նախատեսվում է նաև արևային ֆոտովոլտային վահանակների տեղադրում, որոնց մի մասը (32 հատ) տեղադրվելու է կրթահամալիրի տանիքին: Ֆոտովոլտային վահանակների ընդհանուր քանակը 214 հատ, զբաղեցրած մակերեսը՝ 2240.0 քմ: Զրոյական նիշում տեղակայված ֆոտովոլտային վահանակների վնասվածքներից պաշտպանության նպատակներից ելնելով նախատեսվում է դրանց տարածքը սահմանազատել մետաղական ցանկապատով, և

տեղադրել մուտքի դարպաս: Սահմանազատված տարածքում է տեղակայվելու նաև 400 ԿՎա հզորությամբ էլ. ենթակայանը: Կրթահամալիրի շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ՝ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով, ինչպես նաև 30լ/վ սպրինգլերային համակարգի համար: Համակարգը սնվում է բակային տարածքում տեղադրված 2x75 մ^3 ջրի ռեզերվուարներից, որոնցում պաշարվում է հրդեհամարման համար անհրաժեշտ ծավալը:

Կառուցապատման համար նախատեսվող հիմքերի փորման ժամանակ նախատեսվում է նաև տարածքից հանել և պահեստավորել մոտ 345 մ^3 հող, որը օգտագործվելու է կանաչապատվող տարածքներում՝ որպես հետլիցք: Նախատեսվում է իրականացնել նոր ծառատեսակների և թփերի տնկման աշխատանքներ: Տնկվող ծառատեսակներից են՝ հացենի, թեղի, գիհի, եղևնի, ուռենի, ակացիա և այլն: Ընդհանուր նախատեսվում է մոտ 130 հատ ծառատեսակի և 1500 հատ թփերի տնկման աշխատանքներ:

Նախատեսված է շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

▪ կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել,

▪շինությունների ծածկում համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,

▪շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

▪պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

▪շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,

▪իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց/մտնելիս,

▪շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

▪պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,

▪ շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,

▪բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

▪շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Պատճառաբանական մաս. Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Խնածախի համայնքապետարանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի,

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Սյունիքի մարզպետի աշխատակազմից, Տեղի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ սահմանված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի ապահովմանը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   - շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ՝ փոշու տարածումը կանխող ցանցով,
   - շինհրապարակ մտնող և շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   - բացառել երեկոյան ժամերին աղմկահարույց աշխատանքների իրականացումը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տեղի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Անհրաժեշտ է ապահովել նախագծով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ համաձայնեցնելով Տեղի համայնքապետարանի հետ:
5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
6. Դպրոցի կառուցապատման աշխատանքներն իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի «ՀՀՇՆ 31-04.01-2024

Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմեր N 06-Ն հրամանի հավելվածի սանիտարապաշտպան գոտիների պահպանմամբ :

7. Դպրոցի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի հաստատած «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին N 15-Ն հրամանի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից Տեղ համայնքի Խնածախ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Սարգսյան